ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

Ջերմուկ համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացը իրականացնելու, գործընթացի կառավարման հանձնաժողովի՝ քվեարկության արդյունքների ամփոփման նիստի

ք. Ջերմուկ

05.03.2025թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
Աշոտ Խաչատրյան,
նախագահի տեղակալ՝
Կարեն Գևորգյան
Հանձնաժողովի անդամներ՝
Հակոբ Թադևոսյան, Արմինե Ղազարյան, Ստեփանոս Վարդանյան, Սաթենիկ Կարապետյան, Հայկուհի Առաքելյան, Աշխեն Սարգսյան, Արտակ Բագրատյան, Մանան Գևորգյան, Լուսիկ Սարգսյան, Գեղանի Խաչատրյան

Օրակարգ.

Ջերմուկ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում սահմանված չափանիշներին համապատասխանող առաջարկ-նախագծերի քվեարկության արդյունքների ամփոփում:

Լսեցին.

1. Հանձնաժողովի նախագահ Աշոտ Խաչատրյանին, ով արձանագրեց, որ Ջերմուկ համայնքի ղեկավարի 2025 թվականի հունվարի 17-ի № 19-Լ որոշմամբ հաստատված ժամանակացույցին համապատասխան առաջարկ-նախագծերի քվեարկությունն ավարտվել է: Հանձնաժողովի նախագահ հայտարարեց, որ Ջերմուկ համայնքի մշտական հաշվառում ունեցող բնակչության թիվն, ըստ ՀՀ ոստիկանության ԱՎՎ տվյալների, կազմում է 8241 անձ, իսկ 16 տարին լրացած համայնքի բնակիչների թիվը 6735 է:

2. Հանձնաժողովի քարտուղար Ստեփանոս Վարդանյանին, ով ներկայացրեց քվերակության դրված ծրագրերի հավաքած միավորներն՝ առավելագույն թվից նվազման կարգով.

h/h	առաջարկ-նախագծի անվանումը	հեղինակը	հավաքած ձայների քանակը
1	«Կեչուտ բնակավայրի խմելու ջրի ցանցի հիմնանորոգում»	Ահարոն Ստեփանյան	254
2	«Սպորտ-կոմպլեքս»	Արայիկ Առաքելյան	215
3	Կեչուտ և Գնդեվազ բնակավայրերի համար խմելոի ջրի ախտահանման քլորակայանի կառուցում	Տիգրան Ղուկասյան	208
4	«Մանուկների աշխարհ»	Նորիկ Առաքելյան	139
5	«Ջերմոցներ Ջերմուկում»	Մեսրոպ Հարությունյան	107
6	«Բացօթյա կինոդիտում Ջերմուկում»	Մեսրոպ Հարությունյան	102
7	«Ջերմուկի մշակույթի, սպորտի և ժամանցի	Հրայր Մկրտչյան	89

	կենտրոն»		
8	«Ջերմուկ հեծանվային ակումբ»	Մեսրոպ Հարությունյան	50

3. Հանձնաժողովի նախագահ Աշոտ Խաչատրյանը ներկայացրեց քվեարկությանը մասնակցության իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսի (68 ձայն) շեմը հաղթահարած առաջարկ-նախագծերը.

հ/հ	առաջարկ-նախագծի անվանումը	հեղինակը	հավաքած ձայների քանակը
1	«Կեչուտ բնակավայրի խմելու ջրի ցանցի հիմնանորոգում»	Ահարոն Ստեփանյան	254
2	«Սպորտ-կոմպլեքս»	Արայիկ Առաքելյան	215
3	Կեչուտ և Գնդեվազ բնակավայրերի համար խմելու ջրի ախտահանման քլորակայանի կառուցում	Տիգրան Ղուկասյան	208
4	«Մանուկների աշխարհ»	Նորիկ Առաքելյան	139
5	«Ջերմոցներ Ջերմուկում»	Մեսրոպ Հարությունյան	107
6	«Բացօթյա կինոդիտում Ջերմուկում»	Մեսրոպ Հարությունյան	102
7	«Ջերմուկի մշակույթի, սպորտի և ժամանցի կենտրոն»	Հրայր Մկրտչյան	89

Հանձնաժողովը որոշեց.

Առաջարկել համայնքի ղեկավարին՝ ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի № 1890-Ն որոշման հաստատված կարգի 13-րդ և 14-րդ կետերի պահանջները բավարարող առաջարկ-նախագծերի հիման վրա մշակել մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագեր, կազմել սուբվենցիայի հայտերը և ներկայացնել ՏԿԵՆ՝ համաձայն Ջերմուկ համայնքի ղեկավարի 2025 թվականի հունվարի 17-ի № 19-Լ որոշմամբ հաստատված ժամանակացույցի:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Աշոտ Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ստեփանոս Վարդանյան